Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

264
U-20

M-123

2013-
783
Ս-20
ԵՊ-2008

ՄԱՂԹԱՆՔ

ՎԱՍՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա.ԾԽԱՌՀԻ

287512

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
1920

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

866-2008

ԿԱՐԳ

Մաղթանաց վասն Հանրապետութեան Հայաստան աշխարհի

Խրատ.

Յաւարտ պատարագին վառեսցեն զՋահս, զաշտանակս և զկանթեղս, և ամենայն հոգևորականք ունելով ըստ իւրաքանչիւր աստիճանի զշուրջառ կամ զշապիկ ելցեն խաչիւ և աւետարանաւ և ամենայն զարդուք յատեան։ Պատարագիչն իջանէ ի բեմէն և ասասցէ՝ «Կատարումն օրինաց և մարգարէից», Թողով՝ «Օրհնեսցիս զՏէրն և օրհնեալք եղերուքն» ի վերջ հանդիսին։

Սարկաւագն քարոզեսցէ. Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ, կեցո և ողորմեա։

Պատարագիչն արկանելով զխունկ ի բուրվառն ասասցէ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ առեալ զբուրվառն խնկարկեսցէ ինքն սեղանոյն և ամենայն եղելոցն յեկեղեցւոջ հոգևորականաց և աշխարհականաց երկիցս կամ երիցս. յայնժամ և կացեալքն յատենի սկսանիցեն ի միասին երգել զշարական դՀ. «Ամենազօր Աստուած»։

Իսկ եթէ պատարագիչն իցէ այլ ոք ի հոգևորականաց մերձ յաւարտ պատարագին զգեստաւորեսցի եպիսկոպոսն կամ երիցագոյնն ի հոգևորականաց և կացցէ ի տեղւոջ իւրում յատենի։ Յորժամ պատարագիչն աւարտեսցէ զաղօթսն՝ «Կատարումն օրինաց», կացցէ յառաջոյ սեղանոյն, ունելով զաւետարանն ի գիրկս։

Սարկաւագն յառաջ մատուցեալ առ եպիսկոպոսն կամ առ զգեստաւորեալ երիցագոյնն ի հոգևորականաց քարոզեսցէ՝ «Եւ ես խաղաղութեանս». Եւ նա արկանելով զխունկն արասցէ, որպէս և զբեալն է։

Եւ աւարտեալ զխնկարկութիւնն, մինչև ցլրումն շարականի, եկեալ կացցէ ի տեղւոջ իւրում։

ԿԱՐԳ

Մաղթանաց վասն Հանրապետութեան Հայաստան աշխարհի

Շարական ԴԶ. Զափաւոր–ծանր.

Ա. Ամ մեն նա զօր Աստ ուած և թա գա ւոր յա ւի տե-
նից, որ հաս տա տե ցեր ի Հա յաս տան Աշ խար հի դէն բա պե տու-
թիւ ն Հա յոց ի կա ռա վա րել և ի պահ պա նել ըզ
քո ժո ղո վուրդ ըզ պահ ևա ըզ սա ան սա սա ն և ան-
պար տե լի։

Բ. Աղ բիւր կե նաց և պար գե ւիչ խա ղա ղու թեան և զօ բա-
ցու ցիչ քո յոց ծա ռա յից պար գև ևա կեանս խա ղա ղա կանս
Հան բա պե տու թեանս մե ղոյ և զօ բա ցո ի թըշնամ եաց
պա տե բազ մի ի փառս ան ուանդ և ի պայ ծա ռու թիւն և կե-
ղեց ւոյ քում սըբ բո յ յո ղում փա ռա ւո րի ան դա դա ր
Տէ ր ու թիւ նըդ քո։

Գ. Թա գա ւոր ե ր ի կ նա ւոր զե կե ղե ցի քո ան շա-
րժ պա հ ևա և զեր կըբ պա գուս ան ուա նըդ քում պահ ևա ի
խա ղա ղու թեա ն։

Պետրոսի Առաքելոյն ի Կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Գլ. Բ. 13։

Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն։ Եթէ թագաւորի, իբրև առաւել ումեք։ Եթէ դատաւորաց՝ իբրև ի նմանէ առաքելոց. ի վրէժինդրութիւն չարագործաց՝ և ի գովութիւն բարեգործաց։ Զի այսպէս են կամք Աստուծոյ. բարեգործացն պապանձեցուցանել զանզգամ մարդոյ զանդիտութիւն։ Իբրև զազատս լինել՝ և մի իբրև զպատրուակ չարութեան ունել զազատութիւնն, այլ իբրև Աստուծոյ ծառայք։ Զամենեսեան պատուեցէք, զեղբայրսիրութիւն սիրեցէք. յԱստուծոյ երկերուք. զթագաւորս պատուեցէք։

Ապա ասասցեն ժամասացն ի ձայն ի միոյ դասէ։ Սաղմոս Դ. 8։

Ալէլուիա ալէլուիա։

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Քահանայն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու. (ԺԳ. 20—22)։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք, և աշխարհս խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ։ Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք, այլ դարձեալ տեսից զձեզ և ուրախ լիցին սիրտք ձեր, և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ։

Եւ յաւարս աւետարանին՝ խառզեսցէ սարկաւագն բարձր ձայնիւ ի բիւ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա։

Եւ կատարող հանդիսին թէ եպիսկոպոսն իցէ՝ եւ թէ այլ ոք ասասցէ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք.

Գոհանամք զքէն Տէր, որ իջեր յերկնից ի գաչան Արարատեան և հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմի հաւատոյ և կարդեցեր ի սմա հովիւս և վարդապետս առ ի հաստատութիւն քոյոյ հօտին։

Որ և այժմ եկեր ի յայցելութիւն փոքու հօտիդ քո ազգիս Հայոց՝ և ի ցուցումն յատկականի սիրոյդ և մեծի ողորմութեանդ հաստատեցեր ի Հայաստան աշխարհի զՀանրապետութիւն Հայոց։ Զմինչ տացուք Անկարօտիդ գփոխարէն մեծի բարերարութեանդ, բայց միայն զփառս, զգոհութիւնս և զերկրպագութիւնս վերառաքեսցուք քեզ ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յամենայն ժամ և յաւիտեանս յաւիտենից։

Խաղաղութիւն ամենեցուն.

Եւ արդ՝ մեք ամենեքեան խոնարհեալ անկանիմք առաջի քո և հայցեմք յամենառատ յողորմութենէդ քումմէ, Տէր Աստուած մեր, զի շնորհեսցես մեզ զՀանրապետութիւնս մեր կեալ յամայր ամս, առ ի շնորհել զխաղաղութիւն և զանդորրութիւն Ազգիս Հայոց։

Օրհնեսցես զամենայն հաւատարիմ և զսրտացաւ զործակիցս Սորին. զնախարարս, զկուսակիցս, զզօրապետս և զամենայն զօրս Սորին։

Օրհնեսցես զամենեսեան որք ընդ իշխանութեամբ սորա կան. զեկեղեցականսն և զաշխարհականսն, զմեծսն և զփոքունսն, զարսն և զկանայսն և զամենայն ժողովուրդս Սորա։

Ընդ որոյ հովանաւորութեամբ Ճեալով ի խաղաղութեան՝ փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ յաւարս աղօթիցն յառաջ մատուցեալ սարկաւագունք յաստեան երգեսցեն բարձր ձայնիւ.

Եւ եւ խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա.

Վասն ի վերուստ խաղաղութեան աշխարհիս և անսասանութեան Հանրապետութեանս մերոյ զՏէր աղաչեսցուք

Տէր ողորմեա.

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր. ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Հանրապետութիւն Հայոց. այս նշանաւ սուրբ Խաչիս և սուրբ Աւետարանաւս և աւուրս շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Սարկաւագունքն երգեսցեն։

Ամէն։

Ալէլուիա ալէլուիա ալէլուիա։

Եւ այսպէս կրկնեսցեն երիցս կացեալ անշարժութեամբ ի նմին տեղւոջ, եւ յաւարս երրորդին ասասցեն միայն սարկաւագունք։

Ամէն։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ աւիտեանս յաւիտենից. ամէն։

Ցեսս որոյ քարոզեսցի սարկաւագն։

Սուրբ խաչիս ապաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ, ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Հանդիսադիրն.

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո ի խաղաղութեան. փրկեա յերեսի և յանեքեւոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել ըզքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ցեսս որոյ։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս։

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Սարկաւագն. «Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ»։

Քահանայն. Օրհնեալք եղերուք ի շնորհաց սուրբ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ։ և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանսդ. Ամէն։

ՀԱՅԿ-ՍՍՌ

8256

21758

ՀՀ Ազգային գրադարան
NL0497904